ՓԱՌՆԱՎԱԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈ՞Ր
(Մ. թ. ա. VII դարի վերջին քառորդ)*

ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Փառնավազ, Վիդառնա, Նաբուգոդոնոսոր, Սեբեոս, Մովսես Խորենացի, Հայաստան, Հայկական լեռնաշխարհ, Ուրարտու, Ասորեստան, Մարաստան:

Վաղմիջնադարյան ու միջնադարյան հայ պատմիչները՝ բացառությամբ Սեբեոսի, ով, հետևելով Մովսես Խորենացուն, հայկական պետության առաջացումը կապում են Ասորեստանի անկման և Մարաստանի անմիջական հովանավորության հետ: Մեր աշխատանքներից մեկում[1] խնդրի վերաբերյալ մանրամասն անդրադարձել ենք Մովսես Խորենացու և Սեբեոսի հիշատա-կությունների տարբերություններին՝ նշելով, որ Պատմահայրն Ասորեստանի անկման վերաբերյալ ձեռքի տակ ունեցել է երկու տարբերակ՝ "բաբելական" ու "մարական": Նա հունաբան դպրոցի ազդեցությամբ իր ձեռքի տակ եղած երկու աղբյուրներից նախապատվությունը տվել է "մարական"՝ Ասորեստանը կործանողին և հայոց առաջին արքային թագադրողի դերը վերագրել է ո՛չ թե Բաբելոնիայի արքաներ Նաբոպալասարին (մ. թ. ա. 626–605 թթ.) կամ Նաբուգոդոնոսոր II-ին (մ. թ. ա. 605–562 թթ.), այլ՝ Մարաստանի արքա "Վարբակ"-Կիաքսարին[2]: Այս էլ այն դեպքում, երբ Սեբեոսը նախապատվությունը տվել է առաջին՝ "բաբելական" տարբերակին: Դեռ ավելին, Սեբեոսի հիշատակությունները հաստատվում են սեպագիր աղբյուրների կողմից[3]:

Փաստորեն, Սեբեոսի հիշատակությունները հակասում են Մովսես Խորենացու վկայություններին: Եվ եթե Պատմահայրը Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի

---

* Ներկայացվել է 26. IX. 2019 թ., գրախոսվել է 17. X. 2019 թ., ընդունվել է տպագրության 06. XI. 2019 թ.:

[1] Ռ. Ց ա կ ա ն յ ա ն. Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները. – "ՎԷՄ", 2017, № 4, էջ 230–239:

[2] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, I, ԻԱ:

[3] Ռ. Ց ա կ ա ն յ ա ն. Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները, էջ 230–239:

պատմությունը և հայոց թագավորության հաստատումը կապում է Մարաստանի հետ, ապա Սեբեոսը՝ Բաբելոնի: Դեռ ավելին, Սեբեոսի մոտ Խորենացու Պարույր Սկայորդու փոխարեն հանդես է գալիս Փառնավազը[4]: Վերջինս, ըստ Պատմահոր, հայոց նահապետների ցուցակի Պարույրի թոռն է[5]:

Անդրադառնալով ժամանակաշրջանի իրադարձություններին՝ Սեբեոսը գրում է. "Այս Փառնաւազ հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն *(ընդգծումը մերն է*– Ռ. Ց.*): Եւ ապա յայնմհետէ Բաբելացւոց և Մարաց թագաւորքն տիրեցին մինչև ցԱղեքսանդր Մակեդոնացի…"[6]: Մինչ Փառնավազի մասին այս հիշատակությունը՝ Սեբեոսը հաղորդում է, որ Հայաստանին Շամիրամի տիրելուց հետո "յայնմհետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչև ցմեռանելն Սենեքարիմայ. ապա ապստամբեցին յԱսորւոց թագաւորացն ծառայութենէ:*

Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամենակայ, … ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւարշ. ապա Փառնաւազ"[7]:

Այնուհետև Սեբեոսը ներկայացնում է Փառնավազի սերունդներին՝ տեղորոշելով նաև նրանց տիրապետության սահմանները, որոնք համընկնում են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններին՝ Մեծ Հայքի Աղձնիք և Ծոփք նահանգներին. "*Սա (Փառնավազը* – Ռ. Ց.*) ծնաւ զԲազամ և զԲազարատ. և Բազարատ ծնաւ զԲիւրատ, և Բիւրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բազարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բազարատ և Անգեղ…"[8]:*

Հետաքրքիր է նաև Հայկ Հակոբյանի կողմից Մովսես Խորենացու և Սեբեոսի հայոց նահապետների ցանկերի համադրումը: Այս պարագայում Սեբեոսի ցանկի ճյուղագրությունում ներկայացված են նաև Արամենակ/Արամանեակ/-ի չորս որդիներն ըստ ավագության՝ Զարեհ–Հարմա–Կադմոս–Արամայիս: Փառնավազը Զարեհի սերնդից չորրորդն է՝ Արմոգ–Սարհանգ–Շավարշ–Փառնավազ: Վերջինիս հաջորդներն են Բազամն ու Բազարատ Անգեղը: Արամայիսի սեբեոսյան ճյուղագրությունը համապատասխանում է հայոց նահապետների Խորենացու ցանկին՝ Ամասիա–Գեղամ–Հարմա–Արամ–Արա Գեղեցիկ: Ինչպես երևում է, Արամայիսի սերնդից չորրորդն Արամն է՝ Արա Գեղեցիկի հայրը[9]:

---

[4] *Սեբէոս. Պատմութիւն, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, Ա, 30:*

[5] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, I, ԻԲ:*

[6] *Սեբէոս. նշվ. աշխ., Ա, 30:*

[7] *Նույն տեղում, Ա, 20–25:*

[8] *Նույն տեղում:*

[9] *Հ. Հակոբյան. Տիգրան Մեծը և Հայկազունիները համաձայն Խորենացու և Սեբեոսի. – Հայկազուններ, Երևան, 2013, էջ 43–44, հավելված Գ. 2:*

Հայ պատմագիտական մտքի ներկայացուցիչները, հիմք ընդունելով Միքայել Չամչյանցի կողմից Հայկազուն նահապետների առաջարկած անհայտ ծագման թվագրումները, փորձել են կազմել իրենց արքայացանկերը: Մ. Չամչյանցը Փառնավազի գահակալման համար տալիս է 13 տարի[10]: Ըստ Բաբկեն Հարությունյանի՝ Փառնավազը կառավարել է մ. թ. ա. 586–573 թթ. և եղել է Երվանդ Սակավակյացի նախորդն ու Էրիմենա–Արմանի–Արամի թոռը[11]: Քիչ այլ է Վալերի Խաչատրյանի կարծիքը. ըստ նրա՝ Փառնավազը կառավարել է մ. թ. ա. 624–611 թթ., և նա ոչ թե Էրիմենայի թոռն է, այլ հենց ինքն է՝ Էրիմենան[12]:

Էրիմենայի թեման այստեղ ամենաուշագրավն է, որը, կարծես թե, իներցիայի ուժով շարունակվում է նաև այսօր՝ անուշադրության մատնելով կամ միտումնավոր անտեսելով ուրարտագիտության նվաճումները: Մինչդեռ 2004 թ. հրատարակված Երվանդ Գրեկյանի հոդվածից պարզ դարձավ, որ Ռուսա Էրիմենայորդուն պետք է փնտրել ոչ թե Ռուսա III Արգիշթիորդու հաջորդների մեջ, այլ՝ նախորդների՝ մ. թ. ա. VIII դարի 4-րդ քառորդում[13]: Այսօր ապացուցված կարելի է համարել, որ Ռուսա II Էրիմենայորդին կառավարել է մ. թ. ա. 713–708 թթ.[14]:

Ինչպես արդեն նշեցինք, ըստ Մեբեռսի, Փառնավազի սերունդների տիրապետության սահմանները համընկնում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններին՝ Մեծ Հայքի Աղձնիք և Ծոփք նահանգներին: Այժմ տեսնենք, թե տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների վերաբերյալ ինչ են հաղորդում համաժամանակյա սեպագիր աղբյուրները:

Ըստ նորբաբելոնյան "ժամանակագրությունների"՝ մ. թ. ա. 609 թ., 608 թ. և 607 թ. բաբելոնյան զորքերը Նաբոպալասար արքայի գլխավորությամբ հայտնվում են Հայկական լեռնաշխարհի սահմանամերձ գոտիներում[15], իսկ նրա կառավարման 17-րդ տարում՝ մ. թ. ա. 609 թ., արդեն Հայկական լեռնաշխարհի մատույցներում էին. "(70–75) Աքքադի արքան իր զորքերին օգնության շտապեց և … […]

---

[10] *Մ. Չ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 101:*

[11] *Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII–VI դդ.), Երևան, 1998, էջ 84:*

[12] *Վ. Ն. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանը մ. թ. ա. XV–VII դարերում (Հայոց հին պատմություն), Երևան, 1998, էջ 31:*

[13] *Ե. Գ ր ե կ յ ա ն. Գյովելեքի ուրարտական արձանագրությունը. – ՊԲՀ, 2004, № 1, էջ 248–249:*

[14] *Ե. Գ ր ե կ յ ա ն. Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը և ուրարտական ար- քայացանկը "Երեք Ռուսաներ"-ի խնդրի շուրջ.– "ՎԷՄ", 2017, № 2, էջ 23–37:*

[15] A. K. G r a y s o n. Assyrian and Babylonian Chronicles. New York, 1975. Chron. 3; 4; J.-J. G l a s s n e r. Mesopotamian Chronicles. Atlanta, 2004. Chron. 22; 23.

բարձրացավ դեպի Իզալլա (և) բազմաթիվ լեռնային քաղաքներ … […] հրի մատնեց նրանց […]: Այդ ժամանակ (այդ օրերին) […] զորքերը մինչև Ուրաշտուի շրջան [շա]րժվեցին ե[ռկրում(?)] … […] թալանեց նրանց: Կայազորը, որ արքան […] նրանց մեջ(?) կանգնեցրեց՝ տեղահա]նեցին (և) […] բարձրացան … (?) քաղ[աք]: Աքքադի արքան իր երկիրը վերադարձավ”[16]:

Մ. թ. ա. 608 թ. կամ Նաբոպալասարի կառավարման 18-րդ տարում բաբելական զորքերը՝ գահաժառանգ Նաբուգոդոնոսորի գլխավորությամբ, նոր արշավի ելան. ռազմական գործողությունները ծավալվեցին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան տարածքներում՝ Բիթ-Խանունիայի լեռներում. “(1–4) Նաբու-ապալ-ուծուրի (Նաբոպալասարի – Ռ. Ց.) տասնութերորդ տարին, Ուլուլու[17] ամսին՝ Աքքադի արքան իր զորքերը հավաքագրեց և Տիգրիսի երկայնքով շարժվեց դեպի Բիթ-Խանունիայի լեռները՝ Ուրաշտուի երկրի շրջանում: Քաղաքները հրի մատնեց (և) մեծ քանակությամբ ավար գավթեց …”[18]:

Ինչպես նախորդ արձանագրության մեջ, այնպես էլ այստեղ, որևէ խոսք չկա բաբելացիների կողմից տարածքային նվաճումների մասին. այս անգամ էլ բաբելացիները, մի քանի քաղաք հրի մատնելով և ռազմագերիներ վերցնելով, վերադառնում են Բաբելոն:

Բիթ-Խանունիայի տարածքը, կարծես թե, հաստատապես տեղորոշվում է Իզալլայից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք՝ համապատասխանելով “Աշխարհացույցյան” Աղձնիք նահանգի Անգեղտուն կամ էլ այդ նահանգի որևէ այլ գավառի[19]: Այս դեպքում նույնպես հայտնի չէ էլ Բիթ-Խանունիայում բաբելացիներին դիմադրություն ցույց տված հանրույթի էթնիկական պատկանելությունը: Փոխարենը, սակայն, տեսնում ենք, որ բաբելացիներն արշավանք են կատարում դեպի

---

[16] Արձանագրության գիտական տառադարձման, հայերեն թարգմանության և մեկնաբանության վերաբերյալ տե՛ս Ռ. Ց ա կ ա ն յ ա ն. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII–VI դդ., Երևան, 2018, էջ 161–162, ն ո ւ յ ն ի՝ Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները, էջ 231–232, ն ո ւ յ ն ի՝ Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալասարի Հյուսիսային արշավանքները.– ՊԲՀ, 2011, № 1, էջ 262–264:

[17] Օգոստոս-սեպտեմբեր (Ռ. Ց ա կ ա ն յ ա ն. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII – VI դդ., էջ 275):

[18] Ռ. Ց ա կ ա ն յ ա ն. Նաբոպալասարի (Ք. ա. 626–605 թթ.) կառավարման 18-րդ տարին (BM 22047, 1–13) և “Bīt-ᵐ a-a-nu-ni-a”-ի տեղադրության հիմնախնդիրը.– “Միջազգային գիտաժողովի նյութեր”, Վանաձոր, 2012, էջ 16–17:

[19] Բիթ-Խանունիայի տեղորոշման վերաբերյալ մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 28, նաև՝ էջ 29-ի քարտեզը:

Հայկական լեռնաշխարհի մատույցներ՝ նպատակ ունենալով զարգացնել իրենց առաջխաղացումը, բայց բախվում են ինչ-որ ուժերի և ետ վերադառնում:

Հաջորդ՝ մ. թ. ա. 607 թ. կամ Նաբոպալասարի կառավարման 19-րդ տարում բաբելացիները կրկին Նաբոպալասարի և գահաժառանգ Նաբուգոդոնոսորի գլխավորությամբ արշավի են ելնում: Արձանագրության այն հատվածները, որտեղ խոսվում է բաբելացիների մղած մարտերի ու ավարի մասին, վնասված են և հիշատակվող տեղանունը միանշանակորեն չի վերականգնվում: Տարընթերցումների տեղիք է տալիս մասնավորապես արձանագրության 11-րդ տողը՝ "նա նվաճեց բոլոր լեռները (լեռնային տարածքները)՝ մինչև […(?)…]": Սեպագրագետներ Ա. Ք. Գրեյսոնն ու Ջ.-Ջ. Գլասսները վնասված հատվածը վերականգնում են որպես՝ Ուրարտու[20], իսկ ասորագետ Ջ. Ռիդն առաջարկում է վերականգնել "tam-[tim(?)]"՝ մինչև Ծովի (ըստ հեղինակի՝ Վանա լճի) շրջան"[21]: Անկախ այն հանգամանքից, թե որ տեղանվան վերականգնումն է համապատասխանում իրականությանը, միևնույն է, բոլոր դեպքերում էլ այն տեղորոշվում է Հայկական լեռնաշխարհում:

Քննարկվող նյութի վերաբերյալ սեպագիր-աղբյուրագիտական տեղեկություններն այսքանով սահմանափակվում են, դրանից դուրս բոլոր եզրակացությունները, ըստ ամենայնի, ենթադրություններ են:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ, ըստ Սեբեոսի, Նաբուգոդոնոսորին հնազանդված Փառնավազի տիրույթները համապատասխանում են Իզալլայից հյուսիս ընկած տարածքներին և Բիթ-Խանունիային: Սեպագիր աղբյուրն այս պարագայում ոչ միայն համահունչ է Սեբեոսի հիշատակությանը, այլև համադրվում է նաև ժամանակագրական առումներով[22]: Դեռ ավելին, ինչպես վերը նշվեց, բաբելոնյան զորքերը Հայկական լեռնաշխարհում մարտեր էին մղում հենց Բաբելոնիայի ապագա արքա՝ գահաժառանգ Նաբուգոդոնոսոր II-ի գլխավորությամբ: Անչափ կարևոր հանգամանք, որը վրիպել է տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմություն ուսումնասիրողների տեսադաշտից:

Այսպիսով, ինչպես տեսանք, հնարավոր է Փառնավազի կառավարումը թվագրել մ. թ. ա. VII դարավերջի տասնամյակով և մ. թ. ա. VI դարասկզբով ու ներառել Հայկազուն-Երվանդունիների արքայացանկում, որպես Հայաստանի թագավոր: Նա կառավարել է մ. թ. ա. 610 թ. առաջ և 607 թ. հետո ընկած ժամանակահատվածում, որն ըստ Արտակ Մովսիսյանի, համապատասխանում է Մյուս Հայկակի (Հայկակ Բ)

---

[20] A. K. Grayson. *Նշվ. աշխ. Ժամանակագրություն 4, 11*; J.-J. Glassner. *Նշվ. աշխ. Ժամանակագրություն 23, 11:*

[21] J. E. Reade. Why did the Medes invade Assyria?. – "History of the Ancient Near East, Monographs – V", Continuity of Empire (?): Assyria, Media, Persia, Padova, 2003, p. 154f.

[22] Р. Цаканян. Армения от Хайка до Парнаваза: миф и реальность. – «Метаморфозы истории» (Псков), 2018, вып. 12, с. 127–147.

կառավարման թվականներին՝ մ. թ. ա. 609–573 թթ.[23]: Հետաքրքիր է, որ այս հարցում պատմաբանն առաջնորդվում է Մ. Չամչյանցի թվագրությամբ և վերջինիս ու Խորենացու ցանկերով. Մ. Չամչյանցը Պարույրից հետո իր ցանկից հանել է Խորենացու Հրաչյային, Փառնավազին, Պաճույճին, Կոռնակին ու Փավոսին, որի արդյունքում Պարույրին հաջորդում է Մյուս Հայկակը, Երվանդ Սակավակյացը, ապա՝ Տիգրան Երվանդյանը[24]: Մյուս Հայկակի առումով Ա. Մովսիսյանը գրում է, որ նա, մեծ հավանականությամբ, նույնպես եղել է նոր իշխանության՝ Հայկազունի-Երվանդականների պետության հիմնադիրը: Այլ կերպ ասած, ըստ հեղինակի, "Հայկ" անունը մեզանում վերածվել է հիմնադիր-տիրակալի պատվատիտղոսի[25]:

Շատ հետաքրքիր է նաև Մյուս Հայկակի վարկածը, սակայն նշենք, որ նրա վերաբերյալ տեղեկությունները, բացի Մովսես Խորենացու ցանկից, իսպառ բացակայում են: Դա էլ այն դեպքում, երբ Փառնավազի անունը, ինչպես տեսանք, հիմնավորապես կա Մովսես Խորենացու ցանկում և Սեբեոսի մոտ: Դեռ ավելին, նրա գործունեության տարածաշրջանն ու ժամանակաշրջանը հաստատվում են նորբաբելական "ժամանակագրություններով":

Վերոշարադրյալը, սակայն, դեռևս հիմք չի կարող լինել, որպեսզի Փառնավազին դիտարկենք որպես գոյություն ունեցող պատմական անձի: Նորբաբելական "ժամանակագրություններում", ինչպես տեսանք, բացի տեղագրական անուններից, այլ անուններ չկային, իսկ վաղմիջնադարյան պատմիչների հաղորդումները բավարար չեն դա հաստատելու համար: Որպեսզի մեր եզրակացությունն արհեստածին բնույթ չստանա, դիմենք հարակից գիտության՝ համեմատական լեզվաբանության օգնությանը[26]: Հետաքրքիր է, որ անվանաբանական առումով Փառնավազ անունը գործածական է առնվազն մ. թ. ա. IX դարից՝ մարերի շրջանում[27]:

Այսինքն՝ "Փառնաւազ" անունը, ինչպես հայ նահապետների մի շարք այլ անուններ, Խորենացու և Սեբեոսի մոտ՝ իրանական կամ հնդիրանական են: Փառնավազ նահապետ-արքայի անունը, ինչպես պարզվում է, ոչ միայն հատուկ էր հնդիրանական աշխարհին, այլև տարածված է եղել: Դեռ ավելին՝ ժամանակագրորեն ևս այն բավական գործածական էր մ. թ. ա. VI դարասկզբին, անգամ Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում: Վերջինիս մասին է

---

[23] Ա. Մովսիսյան. Միտաննիի թագավորությունը և Հայկազունի նահապետների ու արքաների ցանկը. – Հայկազունիներ, Երևան, 2013, էջ 84, ծանոթ. 7:

[24] Մ. Չամչյանց. նշվ. աշխ., էջ 101:

[25] Ա. Մովսիսյան. նշվ. աշխ., էջ 84:

[26] Հոդվածում ներկայացված համեմատական լեզվաբանության հատվածի համար երախտագիտություն ենք հայտնում հայագետ-հնդեվրոպաբան Հրաչ Մարտիրոսյանին:

[27] W. Hinz. Altiranisches Sprachgut der Nebenüberlieferungen. Wiesbaden, 1975, p. 94f.; M. Mayrhofer. Iranisches Personennamenbuch, Band I, Die Altiranischen Namen. Wien, 1979, № 57.

վկայում Արամ Քոսյանի մի ուշագրավ բացահայտում: Նա նշում է, որ Հայկական լեռնաշխարհում՝ մասնավորապես Իսուվա-Ծոփքում, առկա են հնդիրանցիների հետքեր, ինչի վկայությունը մ. թ. ա. XV–XIV դդ. թվագրվող խեթական երկու տեքստում հիշատակվող հնդիրանական անձնանուններն են[28]: Նրա կողմից առաջին անգամ իրենց գիտական տառադարձմամբ, թարգմանությամբ ու մեկնաբանություններով աշխարհին ներկայացված այդ տեքստերից, այստեղ կարևոր է KBo XVI 42*-ի համապատասխան հատվածը[29]: Այս տեքստի 26-րդ տողում հիշատակված է "*[m]Ú-it-tar-n[a(-)]" *անունը: Այն մինչ օրս հայտնի հին իրանական "*Vi[n]darna*" անվան կիրառման ամենավաղ ձևն ու հիշատակությունն է[30]: Այսպիսով, ինչպես երևում է, "Փառնաւազ" և "Վ/Ուիդարնա" անունները ոչ միայն պատկանում են նույն լեզվամշակութային տարածքին, այլև հանդես են գալիս նույն տարածքում[31]:*

Լեզվաբանական վերլուծության ենթարկելով Փառնաւազ /Pa□nawaz/ անունը, գտնում ենք, որ այն համապատասխանում է պարթևական Farnbāz [prnbzw]*-ին, հունական՝ "*Φαρνάβαζος*"-ին, արամեական՝* Prnbzw*-ին: Փառնավազ անվան առաջին "փառնա" բաղադրիչը ծագում է իրանական* farnah (*xwarnah-/farnah-), farn, frh, prh, /farrah/ *(հմմտ. հայերեն "փառք" բառի հետ), իսկ երկրորդը՝ "վազ"-ը, կարծում ենք, կարելի է թարգմանել նաև որպես "նա, ով փառք ունի" կամ "փայլող փառք": Լեզվաբան Մ. Մայրհոֆերն այն ծագած է համարում* Viδa□.x□ar□nah *ձևից և թարգմանում՝ "նա, ով* (farnah) *փառք է գտնում":* Farr(ah)/x□ar□nah– *անունն արտացոլում է նաև հունական "*Φαρνάβαζος*" ձևը[32]:*

*Ըստ Հ. Մարտիրոսյանի, Փառնավազ անունը ծագում է իրանական "*Vinda-farnah – "Farnah*-գտնող / շահող" ձևից՝ հին պարսկերեն [մարական(?)]՝* Vindafarnā [Vi-i-d-f-r-n-h]*[33], միջին էլամերեն՝* Mindaparna*[34], արամեական՝* Wndprn, *հունական՝*

---

[28] A. Kosyan. An Aryan in Išuwa. – "Iran and the Caucasus" (Leiden), 2006, vol. 10/1, p. 1ff.; *Նույնի՝ Արիացիները Պախխուվայում. – "Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ", 2006, հ. XXV, էջ 247–248, նույնի՝ Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ. – "Բանբեր Հայագիտության", 2014, - 1, էջ 9–10:*

[29] A. Kosyan. An Aryan in Isuwa, *¿ç 4:*

[30] *Ա. Քոսյան. Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ, էջ 11:*

[31] *Չպետք է մոռանալ, որ Մեծ Հայքի "Աշխարհացոյցյան" վարչաքաղաքական բաժանումն ավելի ուշ շրջանի է պատկանում: Նշվող ժամանակահատվածում Իսուվա-Ծոփքն ավելի ընդարձակ էր, քան՝ "Աշխարհացոյցյան" Ծոփք նահանգը և, ամենայն հավանականությամբ, իր մեջ ներառում էր նաև Աղձնիքի մի մասն ու հարակից մի շարք այլ տարածքներ:*

[32] M. Mayrhofer. *Նշվ. աշխ., - 57:*

[33] *Անվան հիշատակությունը կա Բեհիսթունյան արձանագրությունում.* W. King and R. C. Thompson. The Sculptures and Inscription of Darius the Great on the Rock of Behiston in Persia: A New Collation of the Persian, Susian and Babylonian Texts. London, 1907, "Vidafarnā nāma

Ունταφέρνης, *պարթևական՝* Windafarn [wyndprn], *միջին պարսկերեն և ասորերեն՝* Gundafarr:

Վինդաֆարնա անունը հնդիրանական է եղել նաև հայտնի Կյուրոս Մեծի (մ. թ. ա. 550–529 թթ.) ժամանակներում[35]*: Վինդաֆարնան Դարեհ Աքեմենյանի այն 6 համախոհներից էր, ովքեր նրան օգնեցին սպանել մոգ Գաումատային*[36]*: Անունը, սակայն, կարծում ենք, եզակի չէ. Իսուկա-Ծոփքից և Բեհիսթունյան նույն արձանագրությունից*[37] *հայտնի վերոհիշյալ "*[m]Úitarn[a]-Vi[n]darna*" անունը պետք է, որ ծագած լինի նույն արմատից, ինչ-որ Վինդաֆարնայի անունը:*

Չի բացառվում, որ սեբեոսյան Փառնավազն ու խորենացիական Պարույրը կարող էին նաև ժամանակակիցներ լինել: Առաջինի իշխանությունը, ինչպես որ տեսանք, "համընկնում էր" Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններին, իսկ երկրորդի պարագայում, ելնելով հայ պատմիչների հիշատակություններից՝ հավանական գոտի կարող է լինել Լեռնաշխարհի հարավարևելյան շրջաններին: Ակնհայտ է, որ մ. թ. ա. VII դարավերջին ու մ. թ. ա. VI դարասկզբներին, երկու հզոր և դաշնակից տերությունները՝ Նորբաբելոնյան թագավորությունն ու Մարաստանը՝ ողջ տարածաշրջանը՝ Մերձավոր Արևելքը, բաժանելու էին ազդեցության գոտիների: Վերջինից անմասն չպիտի մնար նաև Հայկական լեռնաշխարհը:

Ինչևէ, ինչպես տեսանք, Փառնավազը գործել է Նորբաբելոնիայի ազդեցության գոտիներում, իսկ Պարույրը, հնարավոր է՝ Մարաստանի: Եվ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին պիտի լինի Հայկազուն-Երվանդունիների արքայացանկը, միևնույն է՝ այնտեղ, ակնհայտորեն, պիտի լինի նաև Փառնավազի անունը՝ որպես Հայաստանի թագավորի: Փաստացի, մ. թ. ա. VII դարի վերջին ու մ. թ. ա. VI դարի առաջին կեսին Հայաստանի այս կամ այն շրջաններում կառավարած, մասամբ

Vahạyasparahạyā puça Pārsa"՝ *("Վինդաֆարնա որդի Վահայասպարայի՝ պարսիկ")* Col. III, 84, 86, 88; Col. IV, 83. *Տե՛ս նաև՝ Հ ե ր ո դ ո տ ո ս. Պատմություն ինը գրքից, թարգմ. բնագր. և ծանոթ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 118–119:*

[34] *Անունն արձանագրության աքքադական և էլամական հատվածներում նույն կերպ է նշած՝ (տե՛ս* W. K i n g and R. C. T h o m p s o n. *Նշվ. աշխ., այուն III, 40, 89):*

[35] *Ք ս ե ն ո փ ո ն. Կյուրոպեդիա, թարգմ. և ծանոթ.՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, VIII, 3, 21:*

[36] W. K i n g and R. C. T h o m p s o n. *Նշվ. աշխ., այուն. III, 76–92:*

[37] *Նույն տեղում,* "Vidarna nāma Bagābigna hạyāpuça Pārsa"՝ *("Վիդարնա որդի Բագաբիգնայի՝ պարսիկ"),* Col. II, 19, 21; Col. IV, 84: *Էլամակն տարբերակի՝* Mitarna, Miturna (Col. II, 13, 15, Col. III, 91), *աքքադական տարբերակի՝* Úmidarna-, Ú (□-) darna, *արամեական՝* Wdrn, *լիկիան՝* Widrna, *հունական՝* Ιδάρνης, Idarnēs, Idarnēs *և այլն (տե՛ս* M. M a y r h o f e r. *Նշվ. աշխ., № 58, էջ 29):*

թվագրվող ու օտար աղբյուրների կողմից *հաստատվող երկու թագավոր ունենք՝ Փառնավազն ու Տիգրան Հայկազն/Երվանդյանը:*

Այսպիսով, վերոշարադրյալը թույլ է տալիս վերանայելու մինչ օրս պատմագրության մեջ մ. թ. ա. VII դարավերջին և մ. թ. ա. VI դարասկզբին Հայկական լեռնաշխարհում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ հայտնի նախկին տեսակետները:

Ռուսլան Ցականյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հին Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի պատմություն ու մշակույթ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 30 հոդվածի: rooslantsakanyan@yahoo.com

REFERENCES

Chamchyants M. Hayots patmutyun, h. A, Yerevan, 1985 (In Armenian).

Glassner J.-J. Mesopotamian Chronicles. Atlanta, 2004.

Grayson A. K. Assyrian and Babylonian Chronicles. New York, 1975.

Grekyan Ye. Gyoveleki urartakan ardzanagrutyune. – PBH, 2004, № 1 (In Armenian).

Grekyan Ye. Karl Fridrikh Leman-Haupte yev urartakan arkayatsanky «Yerek Rusaner»-i khndri shurj. – “VEM”, 2017, № 2 (In Armenian).

Hakobyan H. Tigran Medse yev Haykazuninere hamadzayn Khorenatsu yev Sebeosi. – Haykazuniner, Yerevan, 2013 (In Armenian).

Harutyunyan B. H. Hayastani, hay-iranakan haraberutyunneri yev Arajavor Asiayi hnaguyn patmutyan mi kani khndirneri shurj (m. t. a.VII–VI dd.), Yerevan, 1998 (In Armenian).

Herodotos. Patmutyun ine grkits, targm. bnagr. ev dsanot.ª S. Krkyasharyani, Yerevan, 1986 (In Armenian).

Hinz W. Altiranisches Sprachgut der Nebenüberlieferungen. Wiesbaden, 1975.

Khachatryan V. N. Hayastanye m. t. a. XV–VII darerum (Hayots hin patmutyun), Yerevan, 1998 (In Armenian).

King W. and Thompson R. C. The Sculptures and Inscription of Darius the Great on the Rock of Behiston in Persia: A New Collation of the Persian, Susian and Babylonian Texts. London, 1907.

Kosyan A. An Aryan in Išuwa.– “Iran and the Caucasus” (Leiden), 2006, vol. 10/1.

Kosyan A. Ariatsinere Pakhkhuvayum. – “Merdzavor ev Mijin Arevelqi erkrner ev zhoghovurdner”, 2006, h. XXV (In Armenian).

Kosyan A. Hayots vagh petakanutyan mi khndri shurj.– “Banber Hayagitutyan”, 2014, № 1 (In Armenian).

Ksenopon. Kyuropedia, targm. ev dsanot` S. Krkyasharyani, Yerevan, 2000 (In Armenian).

Mayrhofer M. Iranisches Personennamenbuch, Band I, Die Altiranischen Namen. Wien, 1979.

Movsesi Khorenatsvoy Patmutiun Hayots, ashkhatuteamb M. Abeghyani yev S. Harutyunyani, Tpghis, 1913 (In Grabar).

Movsisyan A. Mitannii tagavorutyune ev Haykazuni nahapetneri u arkaneri tsanky.–Haykazuniner, Yerevan, 2013 (In Armenian).

Reade J. E. Why did the Medes invade Assyria?. – "History of the Ancient Near East, Monographs – V", Continuity of Empire (?): Assyria, Media, Persia, Padova, 2003.

Sebeos. Patmutivn, ashkhxatasiruteamb G. V. Abgaryani, Yerevan, 1979 (In Grabar).

Tsakanyan R. Assura-babelonyan hakamartutyuny yev Nabopalasari Hyusisayin arshavanknere. – ՊԲՀ, 2011, № 1 (In Armenian).

Tsakanyan R. Nabopalasari (K.a. 626–605 tt.) karavarman 18-rd tarin (BM 22047, 1–13) yev "Bīt-^{m}□a-a-nu-ni-a"-i teghadrutyan himnakhndire.– "Mijazgayin gitazhoghovi nyuter", Vanadzor, 2012 (In Armenian).

Tsakanyan R. Asorestani ankman Khorenatsu yev Sebeosi tarberaknere. – "VEM", 2017, № 4 (In Armenian).

Tsakanyan R. Armeniya ot Khayka do Parnawaza: mif i realnost'. – "Metamorfozy istoriy" (Pskov), 2018, vyp. 12 (In Russian).

Tsakanyan R. Etnokaghakakan teghasharzhere Merdzavor Arevelkum yev Haykakan lernashkharhum m.t.a. VII–VI dd., Yerevan, 2018 (In Armenian).

ПАРНАВАЗ – ЦАРЬ АРМЕНИИ?
(Последняя четверть VII века до н. э.)

РУСЛАН ЦАКАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Парнаваз, Видарна, Навуходоносор, Себеос, Мовсес Хоренаци, Армения, Армянское нагорье, Урарту, Ассирия, Мидия.

В своем монументальном труде Мовсес Хоренаци, в основном, отдавал предпочтение греческим источникам. Отсюда и берет начало «мидийская» версия о падении Ассирийского государства. Но под рукой М. Хоренаци находились и другие источники, согласно которым падение Ассирии рассматривалось с точки зрения Вавилона. По М. Хоренаци, первого армянского царя короновал не Набопаласар или Навуходоносор, а мидиец «Варбакес»-Киаксар. А у Себеоса мы встречаем только «вавилонский» вариант, где приведенные выше события привязываются к Вавилону. В своем труде Себеос отмечает, что Парнаваз покорился царю Вавилона Навуходоносру, и с тех пор цари вавилонян и мидиян господствовали до Александра Македонского. Себеос сообщает, что владения Парнаваза располагались в юго-западных районах Армянского нагорья – в Ахдзнике (*Աղձնիք)* или в Цопке (Isuwa, *Ծոփք)*, в частности, в уезде Ангелтун *(Անգեղտուն)*. Имя Парнаваза есть и в списке армянских царей-патриархов у М. Хоренаци. Сообщения Себеоса сходны и с «Вавилонскими хрониками». Из последних видно, что во время ассиро-вавилонского конфликта (626–605 гг. до н. э.) вавилонское войско, во главе которого стоял царь Набопаласар и наследник трона Навуходоносор, по крайней мере, три раза (в 609–608 гг. до н. э.) появлялись на подступах к Армянскому нагорью.

Руслан Цаканян – к. и. н., научный сотрудник отдела Древнего Востока Института востоковедения НАН РА. Научные интересы: история и культура Древней Передней Азии и Армянского нагорья. Автор 1 монографии и около 30 статей. rooslantsakanyan@yahoo.com

PARNAWAZ – THE KING OF ARMENIA?
(The last quarter of the 7th century B.C.)

RUSLAN TSAKANYAN

S u m m a r y

Key words: Parnawaz, Vidarna, Nabuchadnezzar, Sebeos, Movses Khorenatsi, Armenia, Armenian Highland, Urartu, Assyria, Media.

In his monumental work Movses Khorenatsi mainly preferred Greek sources. It is here that the "Median" version of the fall of the Assyrian state originates from. Nevertheless, M. Khorenatsi obviously possessed with other sources, too, according to which the fall of Assyria was considered from the point of view of Babylon. Under the hand of M. Khorenatsi there were two versions according to which the first Armenian king was crowned not by Nabopalassar or Nebuchadnezzar, but by the Median king "Varbakes"– Cyaxares. And in the study of Sebeos we meet only the "Babylonian" version, where the abovementioned events are bound to Babylonia. Sebeos notes, that "This Parnawaz submitted to king Nebuchadnezzar of Babylon. And since then the kings of the Babylonians and Medians reigned up to Alexander the Great". Sebeos reports that the possessions of Parnawaz were located in the southwestern regions of the Armenian Highland – in Ałdznik *(Աղձնիք)* or Sophena (Isuwa, *Ծոփք)*, in particular, in the region of Angełtun *(Անգեղտուն).* The name of Parnawaz occurs in the list of Armenian kings-patriarchs in M. Khorenatsi's work. The records of Sebeos also converge with the "Babylonian Chronicles". From the latter it becomes obvious that during the Assyrian-Babylonian conflict (626–605 B.C.), the Babylonian army, led by king Nabopalassar and Nebuchadnezzar, the heir to the throne, appeared at least three times (609–607 B.C.) on the borders of the Armenian Highland.

Ruslan Tsakanyan – Candidate of Sciences in History. Researcher at the Department of the Ancient Orient of the NAS RA Institute of Oriental Studies. Scientific interests: the history and culture of Ancient Near East and Armenian Highland. Author of 1 monograph and over 30 articles.
rooslantsakanyan@yahoo.com